

ՄԵՂՈՒՆ ԿԱՐ ՀԻՆԱՎՈՒՐՑ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՄ, ՎԻՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՄԱԳԱՂԱԹՅԱ ՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ

Ա. Օ. ԳԱՄՊԱՐՅԱՆ

Նախամարդը քարերին, քարանձավների պատերին ու ժայռերին թողել է բազում հետքեր: Հայոց լեռնաշխարհի արեւախառն ժայռապատկերները, քարայրների մամուռ ու լռակյաց որմնախորշերը, վիմափոր արձանագիւղայունները զգալի տեղեկություններ են տալիս մեղվի մասին: Մզլած ու բորբոսնած կավե ամանների, մետաղյա գոտիների, ականջօղերի եւ մատանիների, ձեռագործերի ու կարպետ գորգերի վրա եւս համոզիչում ենք մեղվապատկերներին:

Մեղվի մասին առայժմ մեզ հայտնի փոքրագիտ առաջին տեղեկությունները Սյունիքում Ուղտասարի ժայռերի մեղվապատկերներն են (մ.թ.ա. III-II հազարամյակներ), (նկ.1):

Մ.Հովսեփյանը 1974 թ. «Մեղվաբուծություն» ամսագրում գրում է, որ 1960 թ. Լեւոնգրադի (Մանկտ-Պետերբուրգ) եւ Արցախի հնագետների արշավախումբը Հաղուրթի շրջանի Ագոխ գյուղի դամբարանաբուրքների պեղումների ժամանակ վիթխարի բազմախոց քարանձավներում հայտնաբերեց տարբեր ձևերի ու չափերի կավե սափորներ՝ թռչունների, մեղուների գծապատկերներով:

Գիտնականների կարծիքով այդ սափորներն ունեն մոտ 150.000 տարվա պատմություն: 1968 թ. նույն տեղում գտան 300.000 տարի առաջ ապրած նեանդերթալյան մարդու մնացորդներ: Զարանձավում ապրող մարդիկ զբաղվել են վայրի մեղվի հավաքչությամբ, որի մասին վկայում են քարայրի պատկերները:

Հայաստանի քարակոփ արվեստում նույնպես առկա են մեղվապահությանն առնչվող պատկերներ: Վաղի Աղթամար կղզու ամրոցը կառուցվել է VII դարում: X դարի սկզբին Արծրունյաց Գագիկ թագավորն այստեղ է տեղափոխում իր արքունիքը: Ճարտարապետ Մանուելը 915-921 թթ. կառուցում է պալատական եկեղեցի-տաճարը, որի պատուհանի աջ ու ձախ կողմերին պատկերված են հրեշտակներ, որոնք խաչ են բռնել: Հրեշտակների գլուխների շուրջը երկված պսակի համալիրում քանդակված է մոմահացի պատկեր՝ վեցանկյուն գեղեցիկ բջիջներով (նկ.2): Հայաստանում տարածված են եղել վիմափոր կառույցները: Դրանց գլուխգործոցի Գեղարդի (Այրիվանք, XIII դար) քարակոփ գավթի զմբեթածե առաստաղին քանդակված է մոմախորիսի պատկեր: Նույնախի պատկեր կա Արցախի Գանձասարի (XIII դ.) վանքի գավթի առաստաղին: Վեցանկյուն բջիջներ հիշեցնող մոմախորիսի մոմահացի քանդակ է արված Իջևանի շրջանի Աչաջուր գյուղի մերձակայքում գտնվող Սակարավանք եկեղեցու (XIII դ.) գավթի սյան խայսկի վրա: Այսպես, իրենց բազմաբովանդակ մտահղացումներում զարդանախաները չեն մոռացել մարդու փոքրիկ բարեկամին՝ մեղվին:

Հայ գրիչներն ու ծաղկողները հին ձեռագրերում ու մանրանկարներում եւս պատկերել են մեղու: Գասպար երեցի եւ XVII դարում օրինակած «Աստվածաշնչի» ձեռագրում ծաղկող Ստեփանոսը նկարել է մի գեղեցիկ մեղու՝ ծաղկի վրա իջնելիս, որը բերքահավաք է խմաստավորում:

Մատենադարանի 3708 ձեռագրի 7 Ա թերթի վրա պատկերված են նորաստված գույզի գունավոր նկարներ: Հարսի ու փեսայի ձեռքերին կան վառվող մոմեր եւ կենաց ծառեր: Մատենադարանի XIII եւ XVII դարերին վերադրվող երկու ձեռագրերում որպես զարդանախշ օգտագործված է հյուսածո փերակի պատկերը, իսկ լուսանցքներում պատկերված են մոմակալներով վառվող մոմեր:

Ատրպետը «Հայ թագավորների դրամները» ուսումնասիրության մեջ գրում է, որ դրամներից երկուսի վրա վարպետորեն քանդակված է Հայկական նահանգների առատ մեղրի խորհրդանիշ մեղուն:

Նոր Զուղայի հայտնի ընտանիքներից մեկի ներկայացուցիչ Գրիգորը 1673 թ. պատվիրում է մեղալիոններ, որոնց մի երեսին պատկերված է դիմակը, մյուսին՝ հյուսածո զանաձե փեթակ եւ թռչող մեղուներ:

Պետականությունից զուրկ հայ ժողովրդի մի սավար հատվածը, որը ընկալություն է հաստատել սկզբում Դրիմի թերակղզում, իսկ XVIII դարի վերջին՝ Դոն գետի ավազանում, հիմնել է Նոր Նախիջևան քաղաքը, որի խորհրդանիշ է ընտրել մեղուն, մեղվաբջիջը եւ մեղվափեթակը՝ ժողովրդի ժրջանությունն ու աշխատասիրության (նկ.3):

Նոր Նախիջևան քաղաքի գերբը (պահվում է Դոնի Ռոստով քաղաքի պատմության քանդադարանում, ընդօրինակումը՝ Երեւանի պատմության պետական քանդադարանում) մի քառանկյունի տախտակ է, բաժանված երկու հավասարաչափ եռանկյունու: Աջ եռանկյունին պատկերում է կանաչ գույնի ներկված մոմաշրջանակը՝ հյուսածո փեթակով, ձախ եռանկյունու սպիտակ ֆոնի վրա նկարված է վեց մեղվի պատկեր: Դոնի Ռոստովի քանդադարանում են պահվում նաեւ Նոր Նախիջևանի քաղաքային վարչության շրթան, որից կախված է մեծ մեղալիոնը՝ նույն գերբի պատկերով, որը կրել է քաղաքագլուխը, ինչպես հիվանդանոցային դրոշմանիշը (մեկ ուրբու արժողությամբ), դարձյալ քաղաքի գերբի նկարով:

Մեղվի եւ նրա արտադրանքի հետ կապված որոշ իմաստ արտահայտող գաղափարագրեր, ծածկագրեր եւ նշաններ կան: Այդ են հավաստում մասունքների ձեռով մեզ հասած հայոց նշանագրային պատկերներում: Ա.Գ.Աբրահամյանի «Հայոց գիր եւ գրություն» գրքում բերված Մ գաղափարագիրը մեղր է նշանակում:

Մեղվի հետ կապված նկարներ կան նաեւ Մատենադարանի ձեռագիր հուշարձաններում:

Եղիշե Զիֆթալարյանը այլումիմից մեղվաշրջանակ է պատրաստել եւ ներկայացնել 1913 թ. ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի Ֆիլիփ քաղաքում բացված մեղվաբուծական համաշխարհային ցուցահանդեսին, որի համար արժանացել է Առաջին կարգի մրցանակի, դիպլոմի եւ ոսկե մեծ մեդալի: Մեդալի մի երեսին պատկերված է մեղու, մյուսին՝ գյուղատնտեսական աշխատանքների տեսարաններ:

Հետաքրքրական է այն փաստը, որ ցուցահանդեսի սրահից կտրել ու գողացել են նրա պատրաստած այլումիմե շրջանակից մի փոքրիկ կտոր (ընդ որում, այլումիմե շրջանակն այնքան բնական է եղել, որ մեղուն այնտեղ մեղր է լցնել ու սերեկել): Զիֆթալարյանի կատարած գյուղի գողության պատճառով դատ է սկսվել: Միջազգային դատարանը երկար ժամանակ զբաղվել է այդ հարցով, որը ձգձգվել է մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը: Ինչպես Ա.Կոթոյանն է գրում, «Այդ մեղրահացի գյուղը պատկանում է ոչ թե ամերիկացիներին, այլ Զիֆթալարյանին»: Իսկ Ամերիկայում այլումիմե նման շրջանակ սկսել են պատրաստել միայն 1926 թ. Զիֆթալարյանի գյուղից 13 տարի հետո: Զիֆթալարյանը մետաղից պատրաստել է նաեւ մոմաթերթ ստանալու մեքենա:

ԻՆՉ ԵՆ ՀՈՒՇՈՒՄ ՄԵՂՎԱՊԱՏԿԵՐ-ԶԱՐԴԱՐԱՆՎԱԾՔՆԵՐԸ...

Հնում ընդունված է եղել գոտիների, դրամների, կնիքների, մատանիների վրա քանդակել դիցուհու, թագավորի, իշխանի, որեւէ կենդանու, թռչունի կամ միջատի, ռդկույզի, ծաղկի պատկեր:

Հնագետ Հ. Մնացականյանը 1965 թ. Մեռանի ավազանի Լճաշեն գյուղի մոտ կատարած պեղումների ժամանակ մեկկարասյա դամբարանից գտել է բրոնզե մի գոտի, որի զարդաբանվածքների՝ կենդանիների, միջատների պատկերների մեջ հստակորեն երևում են թռչող գույզ մեղուներ: Ցեղապետ առաջնորդը որսի կամ արշավանքի զնալիս հավանաբար այդ թախսման գոտին կապել է մեջքին: Այն ունեցել է մոզական չարից ու վտանգից պաշտպանող եւ հաջողություն ապահովող նշանակություն:

Ինչպես վկայում է հնագետը, գոտին պատկանում է մ.թ.ա. X-IX դդ.

Գառնիի պեղումների ժամանակ Բ.Առաքելյանի հայտնաբերած արծաթե եւ երկաթե կնիք-մատանիների վրա քանդակված են թռչունների ու կենդանիների տարածեւ ու տարատեսակ պատկերներ: Դրանցից մեկի ակնարարի վրա պատկերված է մեղու: Կնիք մատանին, հավանաբար, պատկանել է անվանի իշխանի կամ թագավորի: Մեղուն եղել է նրա տոհմի խորհրդանիշը: (Նկ. 4)

Դվինի պեղումներից հայտնաբերված իրերի վրա եւս կան մեղվապատկերներ: Դվինի միջնաբերդի ստորին եւ կենտրոնական թաղամասի շերտերից հանվել են բրոնզավոր, անգույն, ապակե թասեր եւ ջրամաններ, որոնք թվագրվում են IV-VII դդ.: Թասերի եւ ջրամանների քանդակները հիշեցնում են մեղրահացի վեցանկյուն բջիջներ: Նույն կերպ է զարդարված նաեւ XIII-XIII դդ. ոսկեփայլ հախճապակե սափորը:

Մեղվի պատկերներ են եղել նաեւ հայկական դրամների վրա: Հայոց արքունիքում հատած եւ ընդհանրապես Հայաստանում օգտագործված դրամների մեկ կամ երկու կողմերին քանդակվում էին որսի տեսարաններ, կենդանիների, միջատների, բույսերի, նաեւ մարդկանց պատկերներ:

Կրեւեւ կղզու Մալի քաղաքի մոտ Խորրիկի լակոսի դամբարանից հանվել են մ.թ.ա. II հազարամյակին երազրվող 4-7 սմ ոսկյա ականջօղեր՝ մեղուների տեսքով:

ԻՆՉ ԵՆ ՊԱՏՄՈՒՄ ՄԵՂՎԱԳՈՐԳԵՐԸ


Հայ տղամարդը մեղվի եւ մոմի պատկերը քանդակել ու նկարել է քարաժայռերին ու խաչքարերին, գոտիներին ու մատանիներին, իսկ հայ կինը մեղու է պատկերել ձեռագործերի ու կարպետ-գորգերի վրա: Գորգագործները մեղուն ներկայացնում են իբրեւ աշխատասիրության, ազնվության ու պտղաբերության, բերք ու բարիքի, առատության խորհրդանիշ: Տարատեսակ գործվածքների վրա թռչնի կամ աշխատանքի պահերին պատկերված մեղուները խորհրդանշում են կյանքի գեղեցկությունը: Մեղվապահությամբ զբաղվող ընտանիքներում աղջիկները, հատկապես նորահարսները, սփռոցների, խորջիւղների, գորգերի վրա պատկերել են ծաղիկներ, զանազան կենդանիներ, նաեւ մեղուների պատկերներ:

Գորգագործությամբ եւ ասեղնագործությամբ զբաղվող հարսերը հետագայում դառնում են իրենց ընտանիքում մեղվապահությամբ զբաղվող տղամարդու օգնականներն ու մեղվապահ ընկերները:

Երեւանի պատմության քանդադարանում պահվում է նրբագործ, ծաղկազարդ կարպետ, որի շեղանկյունաձեւ զարդարում կենտրոնում կան մեղվապատկերներ: Նույն քանդադարանում է պահվում դարերի պատմություն ունեցող մի գորգ, որի կենտրոնում կարմիր, կապույտ, սեւ, դեղին թելերով գործված են թռչող մեղվապատկերներ, թվով 55-ը:

Նման մի գորգ է կա մեր ձեռքի տակ, որը դարձել է յուրահատուկ մի պաշտամունք: Նրբագեղ, բազմազույն թելերով հյուսած այս գորգի կենտրոնում պատկերված են 18, իսկ չորս անկյուններում 36 մեղու՝ ծաղկաբաժակից նեկտար հանելիս: Գորգը եղել է Մուշի մեղվապահ ընտանիքների խորհրդանիշը:

Ալաշկերտից Երեւան եկած Արսեն Տոնոյանի տանը (Թալին, Դաշտաղեն) պահվում է վանեցի Մարիամ մայրիկի գորգը՝ 24 մեղվապատկերներով, նրբափայլ ու գունագեղ մի աշխատանք: Նման մի նկար մեղվագորգ է կախված Վանից գաղթած, այժմ Երեւանում ապրող Սիրուշ եւ Ավիկ Հովհաննիսյանների տան պատից:



Նկ. 1. Սյունիքի ժայռապատկեր



Նկ. 4. Մեղվադրոշմ



Նկ. 2. Աղթամար եկեղեցու զարդամանրանք



Նկ. 3. Նոր Նախիջևանի գերբը

ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մ. ԳՈՐԿՈՒ ՆԱՄԱԿԸ ՏԻԳՐԱՆ ՀԱԽՈՒՄՅԱՆԻՆ

Ա. Գ. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Քերթողական արվեստը հին պատմություն ունի, նույնքան հին են այն ուսուցանելու գաղափարները։ Եվ օրինյալ են այն ուսուցիչները, որոնք դարեր ի վեր կատարել են այդ շնորհակալ գործը՝ նկատել տաղանդավոր սկսնակ գրողներին, հովանավորել, ոգևորել, նաև պարզապես սովորեցրել կատարելագործվելու ճանապարհը։ Աշխարհում ոչ մի հանճարեղ գրող կամ արվեստագետ չի հասել իր կատարելությանը առանց համառ ինքնադաստիարակման և ուսուցիչների փորձի՝ ուղղակի, թե անուղղակի առումով։

Տարբեր դարաշրջաններից, տարբեր գրականություններից պահպանվել են հուշեր, նամակներ, տեսական ձեռնարկներ, թե ինչպես պետք է գրել, և ինչ պետք է գրել։ Այդ օրինակ գրական հանճարաբանականները կամ երբեմն խոստովանությունները դասեր են՝ ուղղված ժամանակակիցներին և ապագային, որոնցով սնվում և ձևավորվում է նոր գրական սերունդը։ Ահա նմանօրինակ աշագրավ փաստի ենք հանդիպում, երբ թերթում ենք 1928 թվականի «Գրական դիրքերում» ամսագիրը, որի ապրիլյան (N 4) համարում տպագրված է Մաքսիմ Գորկու նամակը՝ ուղղված Տիգրան Հախումյանին։ Ամսագիրը տպագրել է նամակի ռուսերեն բնագրի լուսապատճենը և Տիգրան Հախումյանի կատարած հայերեն թարգմանությունը։

Տիգրան Հախումյանը եղել է բանաստեղծ, թատերագետ, գրականագետ, թարգմանիչ, խմբագիր, վաստակաշատ պրոֆեսոր, որը ռուս գրականություն է դասավանդել Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում և Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում։ Նրա գրականագիտական հետաքրքրությունների շրջանը լայն էր՝ ռուս, արևմտաեվրոպական, հայ գրական մեծեր, այդ թվում՝ Անտոն Չեխով, Ալեքսանդր Գրիբոյեդով, Դերենիկ Դեմիրճյան։ Թարգմանություններ է կատարել Լոպե դե Վեգայից, Ա. Պուշկինից, Մ. Գորկուց, Ի. Էրենբուրգից և շատ ու շատ ուրիշներից։ Նա հատկապես խորացել է թատերական գործերի թարգմանության մեջ՝ ռուսերենից հայերենի թարգմանելով իննսուներեղ ռամատիկական ստեղծագործություններ։

Հանրագիտակ այս մտավորականի մտահոգության սահմանները լայնածավալ էին. նա ջանում էր ուրիշներին փոխանցել իր խնացածը, փորձը, հոգատար ձեռով հայ ընթերցողի առաջ թարգմանաբար բացում էր համաշխարհային գրականության կարևոր էջերը։ Նրա այս մտահոգությունների առիավառյան է նաև Մաքսիմ Գորկու՝ իրեն ուղարկած նամակի տպագրությունը։ Այն ունեցել է հետևյալ նախապատմությունը։ 1916թ. դեռևս երիտասարդ և սկսնակ բանաստեղծ Տիգրան Հախումյանը, որը գրում էր ռուսերեն, և դեռևս հայերենը իր գրոց լեզուն չէր, բանաստեղծական առաջին լուրջ քայլերն էր անում, որոնք լույս էին տեսնում ռուսական պարբերականներում։

Եվ անսպասելիորեն նա ստանում է մի երկառոյ. «Ուղարկեցեք, խնդրում եմ, ձեր բանաստեղծություններն իմ անունով՝ «Լեռնային» ամսագրի հասցեին։ Ա. Պեշկով»։

Ա. Պեշկովը նույն ինքը Մ. Գորկին էր, և Մ. Հախումյանը ոգևորված ընտրում է մի 10-12 բանաստեղծություններ և ուղարկում Գորկուն։

Ի պատասխան ստացվում է Մ. Գորկու նամակը, որը լավատեսական էր և քաջալերիչ։ Նշանավոր գրողը երիտասարդ բանաստեղծի մեջ տեսնում է գրականության իսկական նվիրյալին, որին և հղում է իր պատգամները, որոնց հրապարակումը եւ՝ 1928-ին, եւ՝ այսօր ի շահ գրականության է։

1916 թվի հոկտեմբերի 25-ին գրած իր նամակը Մ. Գորկին սկսում է այսպես.

«Իհարկե, դուք պետք է գրեք շատ, բայց նույնքան անհրաժեշտ է Ձեզ համար առավել մոտ կանգնել կյանքին, անմիջականորեն ոգտվել նրա ներշնչումներից, պատկերներից, զգալ նրա թրթիռը նրա մարմինն ու արյունը։ Մի՛ կենտրոնացեք Ձեզ վրա, այլ ամբողջ աշխարհը կենտրոնացրե՛ք Ձեր մեջ։ Կյանքի մեջ շատ բույն կա, բայց կա մեղր.՝ գտե՛ք այդ մեղրը։ Մի՛ եղեք սոսկ քնարերգու, մի՛ փակեք Ձեր հոգին Ձեր խիճ ձեռքով կառուցած վանդակի մեջ, համարձակություն գտեք լինելու յե՛վ յերգիծաբան, յե՛վ վիպասան, յե՛վ սատիրիկ, յե՛վ պարզապես ուրախ մարդ։ Կյանքից պիտի կարողանալ ամեն բան վերցնել յե՛վ ամեն բան տալ կյանքին, մարդկանց։

Այժմյան բանաստեղծների մեծամասնությունը կարծես թե անմարդաբանական կոզիների վրա ապրելիս լինի, կյանքից յե՛վ նրա քառսից դուրս։ Այս, իհարկե, ավելի հեշտ է յե՛վ առավել հարմար է, քան թե իրականության քառսի մեջ ապրելը, սակայն՝ այս նշանակում է՝ ինքն իրեն կողոպտել։ Զպետք է Ռոբինզոն լինել, չի՛ հարկավոր։ Պետք է ապրել, աղմկել, խնդալ, հայհոյել, սիրել...

Պետք է որոնել այն, ինչ վոր դեռ յե՛վս չէ գտնված,՝ նոր խոսքը, հանգը, պատկերը։ Բանաստեղծը՝ աշխարհիս արձագանքն է, յե՛վ վո՛չ միայն իր հոգու դայակը։